23 հունիսի 2015 թ. N 386-Ա

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՑՈՐԵՆԻ ԱԼՅՈՒՐԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Ժամանակավորապես դադարեցնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածք 110100 ծածկագրով ապրանքային դիրքում ընդգրկված ցորենի ալյուրի (բացառությամբ արտադրողի կամ փաթեթավորողի կողմից մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար նախատեսված մինչև 3 կգ փաթեթավորմամբ, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված և Հայաստանի Հանրապետությունում վերամշակված ցորենի՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգի) ներմուծումը:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված և Հայաստանի Հանրապետությունում վերամշակված ցորենի ալյուրի ներմուծման կարգը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**